ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ , Կենտրոնականհրապարակ N7
Հեռ. 060650035
Կայքgegharkunik.mtad.am
Էլ. փոստgegharkunik@mta.gov.am
N 02/0520
19/01 2024թ.

«ԼԻԴԵՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Կ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆԻՆ
/էլ. հասցե՝ lider.construction@bk.ru/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Ցուցուլյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի (Պատվիրատու) և <<Լիդեր Քնսթրաքշն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Կապալառու) միջև 2023 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N ՀՀ ԳՄ ԳՀԱՇՁԲ-2023/02 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (Պայմանագիր) թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքները (Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար:

Համաձայն պայմանագրի 1.3 կետի՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և աշխատանքների կատարման

վերջնաժամկետ է սահմանվում 30 օրացույցային օր ժամանակահատվածը (հավելված 2):

Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ Կապալառուի կողմից չեն պահպանվել պայմանագրի 6.1 կետով սահմանված պահանջները, այն է՝ Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի <<բ>> ենթակետի պահանջը՝ <<Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)>> ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը 2024 թվականի հունվարի 18-ին միակողմանի մասնակի լուծում է <<Լիդեր Քնսթրաքշն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N ՀՀ ԳՄ ԳՀԱՇՁԲ-2023/02 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը չկատարված աշխատանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ <<Լիդեր Քնսթրաքշն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 38116 (երեսունութ հազար մեկ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 2024 թվականի հունվարի 17-ը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Հաշվի առնելով վերը նշված իրավակարգավորումները, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 378893 (երեք հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, որակավորման ապահովման գումարը կազմում է 568340 (հինգ հարյուր վաթսունութ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին և հաշվարկված տույժի գումարը կազմում է 38116 (երեսունութ հազար մեկ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև ծանուցումը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում Ձեր կողմից վճարվի վերը նշված 378893 (երեք հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ պայմանագրի կատարման ապահովման և 568340 (հինգ հարյուր վաթսունութ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարները և վճարման կտրոնների բնօրինակները ներկայացվեն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, ապա <<Լիդեր Քնսթրաքշն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հրավեր 8.14 կետի 2-րդ պարբերություն /սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին/):

19.01.2024

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հարգանքներով՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարողներ՝

Քաղաքաշինության, հողաշինության և

ենթակառուցվածքների կառավարման վարչություն՝ 060 650619

Ֆինանսական վարչություն՝ 060 650618

Իրավաբանական բաժին՝ 060 650612